# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

«25» հունվարի 2023 **թվականի** N 88 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածների, Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-դ կետի, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 10-ի N 44-Ա, 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 248-Ա և 2022 թվականի նոյեմբերի 11-ի N 214-Ն որոշումները՝

**Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու համար 2023 թվականի փետրվարի 27-ին հայտարարել աճուրդ:
2. Հաստատել աճուրդի հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Недействительная подпись

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«25» հունվարի 2023 թվականի N 87-Ա

# 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՏՐՎԱԾ №75/21 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտուշ Յաշայի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Շահումյան փողոց №148 հասցեում շենքի վերակառուցման աշխատանքների կատարման համար 2021 թվականի սեպտեմբերի 10-ին տրվել է №75/21 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 16,2/տասնվեց ամբողջ երկու/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 8/ութ/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2021 թվականի սեպտեմբերի 10-ին տրված №75/21 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 8/ութ/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

25.01.2023

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2023 թվականի N 86 Ա

**<<ՃԳՆԱՎՈՐ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՌՈՄԱՆ ԺԻՐՈՎԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ 119/1 ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Ճգնավոր>> ՍՊԸ տնօրեն Ռոման Ժիրովի 2023 թվականի հունվարի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 17-ին 675 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Ճգնավոր>> ՍՊԸ տնօրեն Ռոման Ժիրովին Գյումրի քաղաքի Շիրակացի 119/1 տուն հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Ճգնավոր>> ՍՊԸ տնօրեն Ռոման Ժիրովին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 85-Ա

**<<ՃԳՆԱՎՈՐ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՌՈՄԱՆ ԺԻՐՈՎԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ 119/1 ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Ճգնավոր>> ՍՊԸ տնօրեն Ռոման Ժիրովի 2023 թվականի հունվարի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 17-ին 673թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել <<Ճգնավոր>> ՍՊԸ տնօրեն Ռոման Ժիրովին Գյումրի քաղաքի Շիրակացի 119/1 տուն հասցեի առևտրի օբյեկտին ժամը 24:00-ից հետո աշխատել:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Ճգնավոր>> ՍՊԸ տնօրեն Ռոման Ժիրովին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 84-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԻԱՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ 18Բ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Դիանա Տիգրանյանի 2023 թվականի հունվարի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 17-ին 624 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Դիանա Տիգրանյանին Գյումրի քաղաքի Շիրակացի 18բ հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիանա Տիգրանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող
Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2023 **թվականի** N 83-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 7/17 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անահիտ Սիմոնյանի 2023 թվականի հունվարի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 19-ին 850 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Անահիտ Սիմոնյանին Գյումրի քաղաքի Անի թաղամաս 7/17 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Անահիտ Սիմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող
Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 թվականի N 82-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐՃԻ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանի 2023 թվականի հունվարի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 18-ին 775 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Անկախության հրապարակի հարևանությամբ իրականացնել սուրճի բացօթյա առևտուր:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ու Մ

«24» հունվարի 2023 **թվականի** N 81-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐՃԻ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանի 2023 թվականի հունվարի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 18-ին 776 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի հարևանությամբ իրականացնել սուրճի բացօթյա առևտուր:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2023 **թվականի** N 80-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑԻ 36 Գ ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վաչագան Գրիգորյանի 2023 թվականի հունվարի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 18-ին 687 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վաչագան Գրիգորյանին Գյումրի քաղաքի Մ. Խորենացի 36Գ հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վաչագան Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող
Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 79-Ա

### <<ԱԼԿՈ ՀԱՈՒԶ>> ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԷՄՄԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 25/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Ալկո Հաուզ>> ՍՊԸ-ի տնօրեն Էմմա Սարգսյանի 2023 թվականի հունվարի 16-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 16-ին 549 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Ալկո Հաուզ>> ՍՊԸ-ի տնօրեն Էմմա Սարգսյանին Գյումրի քաղաքի Մ⍰ Խորենացի 25/2 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Ալկո Հաուզ>> ՍՊԸ-ի տնօրեն Էմմա Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2023 **թվականի** N 78-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 48/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ռուբեն Սարգսյանի 2023 թվականի հունվարի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 19-ին 791 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռուբեն Սարգսյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 48/2 հասցեում իրականացնել տեխնիկական հեղուկների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռուբեն Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.01.2023

X

Փոխարինող

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հունվարի 2023 **թվականի** N 77-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 291.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 291.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 227.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 291.89 (երկու հարյուր իննսունմեկ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 291.89 (երկու հարյուր իննսունմեկ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 227.19 (երկու հարյուր քսանյոթ ամբողջ տասնինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ռուսլան Ռոբերտի Համբարյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 291.89 (երկու հարյուր իննսունմեկ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 291.89 (երկու հարյուր իննսունմեկ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 227.19 (երկու հարյուր քսանյոթ ամբողջ տասնինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Ռուսլան Ռոբերտի Համբարյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23.01.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 76-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 44.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 44.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 34.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 44.32 (քառասունչորս ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 44.32 (քառասունչորս ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 34.85 (երեսունչորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ռուլան Ռոբերտի Համբարյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 44.32 (քառասունչորս ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 44.32 (քառասունչորս ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 34.85 (երեսունչորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Ռուլան Ռոբերտի Համբարյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23.01.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ X Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 75-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԵՎՈՐԳ ՖԵԼԻՔՍԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՄԱՄԻԿՈՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ, ՖԵԼԻՔՍ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԱ ԱՐՏՈՒՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԿԱԹ ԳԾԻ ՕՂԱԿ N 24 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 16.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 12.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ԴՈՒՌԸ, 1 ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԴՌԱՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Գևորգ Ֆելիքսի Գասպարյանին, Անահիտ Մամիկոնի Գասպարյանին, Ֆելիքս Վոլոդյայի Գասպարյանին և Քրիստինա Արտուրի Մկրտչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2642628 վկայական) Գյումրի քաղաքի Երկաթ գծի օղակ N 24 հասցեի բնակելի տան օրինական հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 16.51 (տասնվեց ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (12.06 (տասներկու ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր) ներքին մակերեսով բնակելի շինություն, ինքնակամ փակված է 1 (մեկ) դուռ, 1 (մեկ) պատուհան և դռան է ձևափոխված 1 (մեկ) պատուհան:

Քաղաքացի Քրիստինա Արտուրի Մկրտչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Քրիստինա Արտուրի Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի նոյեմբերի 10-ին N 21022 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Գևորգ Ֆելիքսի Գասպարյանին, Անահիտ Մամիկոնի Գասպարյանին, Ֆելիքս Վոլոդյայի Գասպարյանին և Քրիստինա Արտուրի Մկրտչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Երկաթ գծի օղակ N 24 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 16.51 (տասնվեց ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (12.06 (տասներկու ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր) ներքին մակերեսով բնակելի շինությունը, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռը, 1 (մեկ) պատուհանը, դռան ձևափոխված 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 53165 (հիսուներեք հազար մեկ հարյուր վաթսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գևորգ Ֆելիքսի Գասպարյանին, Անահիտ Մամիկոնի Գասպարյանին, Ֆելիքս Վոլոդյայի Գասպարյանին և Քրիստինա Արտուրի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.01.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 74-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 8-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 10-ի «Քաղաքացի Ռուզաննա Վաղինակի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 8 հասցեի բազմաբնակարան շենքի N 1 բժշկական ախտորոշման կենտրոնի տարածքում բազմաբնակարան շենքի ծավալում ինքնակամ կառուցված 28.44 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հասարակական շինությունը, ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 3 դուռը, 2 պատուհանն օրինական ճանաչելու մասին» N 8-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 10-ի «Քաղաքացի Ռուզաննա Վաղինակի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 8 հասցեի բազմաբնակարան շենքի N 1 բժշկական ախտորոշման կենտրոնի տարածքում բազմաբնակարան շենքի ծավալում ինքնակամ կառուցված 28.44 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հասարակական շինությունը, ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 3 դուռը, 2 պատուհանն օրինական ճանաչելու մասին» N 8-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝
    1) վերնագրում, «շինությունը» բառից հետո լրացնել «7.75 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով աստիճանները,» թիվը և բառերը,
    2) նախաբանի 1-ին պարբերությունում «շինություն» բառից հետո լրացնել «20.37 (քսան ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքում ինքնակամ կառուցված է 7.75 (յոթ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով աստիճաններ,» թվերը և բառերը,
    3) որոշման 1-ին կետում «շինությունը» բառից հետո լրացնել «20.37 (քսան ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքում ինքնակամ կառուցված 7.75 (յոթ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով աստիճանները,» թվերը և բառերը,
    4) որոշման 1-ին կետում «110415 (մեկ հարյուր տասը հազար չորս հարյուր տասնհինգ)» թիվը և բառերը փոխարինել «135262 (մեկ հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր վաթսուներկու)» թվով և բառերով:

23.01.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 73-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՆՋՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 5/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՎԱԾ 108.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 108.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 91.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մնջոյան փողոցի N 5/2 հասցեի բնակելի տան հողամասի հարևանությամբ ինքնակամ զբաղեցված 108.79 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 108.79 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 91.07 (իննսունմեկ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մնջոյան փողոցի N 5/2 հասցեի բնակելի տան հողամասի հարևանությամբ ինքնակամ զբաղեցված 108.79 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 108.79 (մեկ հարյուր ութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 91.07 (իննսունմեկ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Մկրտիչ Միքայելի Հովհաննիսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17.01.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 72 - Ա

**<<ԳԱԶՈՆԵ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 189 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանի 2023 թվականի հունվարի 12-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 12-ին 396 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին Գյումրի քաղաքի Երևանյան 189 հասցեի առևտրի օբյեկտին ժամը 24:00-ից հետո աշխատել:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.01.2023

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 71 - Ա

## <<ԳԱԶՈՆԵ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ 189 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանի 2023 թվականի հունվարի 12-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 12-ին 395 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին Գյումրի քաղաքի Երևանյան 189 հասցեում իրականացնել հեղուկ գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.01.2023

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2023 **թվականի** N 70-Ա

## <<ԳԱԶՈՆԵ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑԻ 54 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանի 2023 թվականի հունվարի 12-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 12-ին 398 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի 54 հասցեում իրականացնել հեղուկ գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.01.2023

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2023 **թվականի** N 69-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՌՆԻԿ ԲԱԿՄԱՋՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գառնիկ Բակմաջյանի 2023 թվականի հունվարի 16-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 16-ին 583 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գառնիկ Բակմաջյանին Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետ 1/3 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գառնիկ Բակմաջյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.01.2023

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

«24» հունվարի 2023 **թվականի** N 68 - Ա

### <<ԳԱԶՈՆԵ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑԻ 54 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանի 2023 թվականի հունվարի 12-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 12-ին 394 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին Գյումրի քաղաքի Խորենացի 54 հասցեի առևտրի օբյեկտին ժամը 24:00-ից հետո աշխատել:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գազոնե>> ՍՊԸ տնօրեն Կարեն Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.01.2023

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ
Փոխարինող

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հունվարի 2023 թվականի N 67-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի N 263-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 04-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը նոր խմբագրությամբ հաստատելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 22-ի N 516-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին » N 263-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 122 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

**Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**
**փոխարինող**

**2023թ. ք. Գյումրի**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի փոխարինողի
2023 թվականի հունվարի 24 -ի N 67 -Լ որոշման

Հավելված N 122
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 04 -ի N 263 -Ա որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ

**1. Ընդհանուր դրույթներ**

**1.1.** Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի (այսուհետ՝ բաժին) պետ, 2.1-15

**1.2.** Ենթակա և հաշվետու է
Աշխատակազմի քարտուղարին

**1.3.** Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի գլխավոր մասնագետը

**1.4.** Աշխատավայրը
Գյումրու համայնքապետարան

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1.** Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները
Բաժնի պետը՝

1) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը,

2) աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,

3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի և (կամ) աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ

միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,

4) ստորագրում է իր և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը,

5) համայնքի ղեկավարի և (կամ) աշխատակազմի աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը,

6) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է  բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը,

7) կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին,

8) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում է այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը.

9) իրավական փորձաքննության է ենթարկում և տալիս է եզրակացություններ՝ համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, վարչական հանձնաժողովի որոշումների ու աշխատակազմի քարտուղարի հրամանների նախագծերի.

10) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջների համաձայն՝ աշխատակազմում կազմվող պայմանագրերի, կանոնադրություն-կանոնակարգերի,պաշտոնների անձնագրերի, գրությունների, ծրագրային և այլ համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքներ,

11) վերահսկում է ոլորտում իրականացվող աշխատանքները,

12) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ պետական մարմինների հետ լուծում է իրավական խնդիրներ,

13) իր իրավասության սահմաններում համայնքապետարանում քննարկվող հարցերի վերաբերյալ, ինչպես նաև  անհրաժեշտության դեպքում համայնքապետարանի բաժիններից և համայնքային ենթակայության այլ հիմնարկներից, կազմակերպություններից և պաշտոնատար անձանցից կարող է պահանջել և ստանալ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր,

14) իրավաբանական խորհրդատվություն է տալիս մյուս բաժիններին,

15) սահմանված կարգով նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր, կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին,

16) վերահսկում է համայնքի ղեկավարի և ավագանու մասնակցությամբ դատական նիստերին ներկայացուցչության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքները,

17) վերահսկում է բաժնի ներքին գործավարության փաստաթղթերի շրջանառության և պահպանման աշխատանքների կատարման ընթացքը,

18) կատարում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով նախատեսված այլ աշխատանքներ,

19) մասնակցում է ռիսկերի գնահատման և գնահատման արդյունքում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի կազմման աշխատանքների կատարմանը,

20) իր իրավասության շրջանակներում համագործակցում է իրավասու մարմինների հետ, ապահովում ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին,

21) տրամադրում է համապատասխան մարմնի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ է ձեռնարկում համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ,

22) համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից կարող է պահանջել և ստանալ տեղեկատվություն,

23) հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից կարող է պահանջել և ստանալ մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:

24) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ

իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## 3. Կազմակերպական շրջանակը

**3.1.** Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

1) բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները,

2) պատասխանատվություն է կրում օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

3) բաժնում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատանքները,

4) կատարում է բաժնի գործունեության բնագավառում վարվող քաղաքականության մասով՝ համայնքի ղեկավարի, իսկ համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները,

**3.2.** Որոշումներ կայացնելու լիազորությունները

1) լուծում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.

2)բաժնի պետը իրեն անմիջականորեն ենթակա աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

**3.3.** Շփումները և ներկայացուցչությունը

1) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև աշխատակազմի ստորաբաժանումների պետերի և այլ աշխատողների հետ,

2) բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում,

3) ապահովում է բաժնի փոխհարաբերությունները աշխատակազմի այլ ստորաբաժանումների հետ,

4) համայնքի ղեկավարի և (կամ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս իր լիազորությունների շրջանակներում շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության մյուս համայնքների և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

**3.4.** Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

1) Համայնքի ղեկավարի և (կամ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմի ռազմավարական, կազմակերպական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրները, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

**4. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**4.1.** Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

**4.2.** Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

1) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

4) տիրապետում է ռուսերեն (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվին:

**4.3.** Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

**5.Համայնքային ծառայության դասային աստիճանը**

Բաժնի պետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«23» հունվարի 2023 **թվականի** N 66-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ 2007-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված պատանիների 2023 թվականի հունվարի 25-ին Երևան քաղաքում կայանալիք առաջնության հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվ ածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի հունվարի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված պատանիների առաջնության հերթական տուրին մասնակցելու համար 2022 թվականի հունվարի 25-ին քաղաք Երևան գործուղել թվով 12 անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դսակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պարտականությունները կատարող՝ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2022 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«23» հունվարի 2023 **թվականի** N 65-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ 2007-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված աղջիկների 2023 թվականի հունվարի 25-ին Երևան քաղաքում կայանալիք առաջնության հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվ ածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի հունվարի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի 2007-2008 թվականներին ծնված աղջիկների առաջնության հերթական տուրին մասնակցելու համար 2022 թվականի հունվարի 25-ին քաղաք Երևան գործուղել թվով 12 անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դսակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պարտականությունները կատարող՝ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2022 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«23» հունվարի 2023 **թվականի** N 64-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅԱՆ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության ձյան վոլեյբոլի մեծահասակների 2023 թվականի հունվարի 27-29-ը Ծաղկաձոր քաղաքում կայանալիք բաց առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի հունվարի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության ձյան վոլեյբոլի մեծահասակների բաց առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի հունվարի 27-29-ը քաղաք Ծաղկաձոր գործուղել թվով 17 (տասնյոթ) մարդ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պարտականությունները կատարող Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2022 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2023 **թվականի** N 63 - Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Լոռու մարզի աթլետիկայի 2023 թվականի հունվարի 25-27-ը Վանաձոր քաղաքում կայանալիք ձմեռային բաց առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով աթլետիկայի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի հունվարի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Լոռու մարզի աթլետիկայի ձմեռային բաց առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի հունվարի 27-29-ը քաղաք Վանաձոր գործուղել թվով 19 (տասնինը) մարդ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պարտականությունները կատարող Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

**2022 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«23» «հունվարի» 2022 թվական** 62-Ա

**ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 132 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արման Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետության Գյումրիի քաղաքապետի 1997 թվականի մարտի 11-ի N 132 որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման 28-րդ կետում տեղի է ունեցել վրիպակներ՝

1. «Հովհաննիսյան Արման Սեյրանի» հայրանվան փոխարեն գրվել է «Սերյոժայի» բառը (հիմք՝ ծննդյան վկայական տրված 1979 թվականի օգոստոսի 17-ին, թիվ VIII-СЛ N 382860, անձնագիր՝ AU 0585260, տրված 18.01.2022 թվականին 016-ի կողմից),
2. «Դեմիրճյան Հռիփսիմե Սեյրանի» ազգանվան և հայրանվան փոխարեն գրվել է «Հովհաննիսյան Հռիփսիմե Սերյանի» բառերը (հիմք՝ ծննդյան վկայական տրված 1981 թվականի մարտի 21-ին, թիվ VIII-СЛ N 382861, անձնագիր՝ AT 0604025, տրված 07.12.2020 թվականին 016-ի կողմից),
3. «Հովհաննիսյան Ադրինե Սեյրանի» հայրանվան փոխարեն գրվել է «Սերյանի» բառը (հիմք՝ անձնագիր՝ AR 0384004, տրված 19.07.2017 թվականին 001-ի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ

հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Արման Հովհաննիսյանի 2023 թվականի հունվարի 09-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2023 թվականի հունվարի 09-ին, թիվ 171 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի մարտի 11-ի «Մուշ-2 թաղամասի 2-1 շենքի Ա-Բ-Վ մասնաշենքերի բաշխման մասին» N 132 որոշման 28-րդ կետում կատարել փոփոխություն՝

   1.1. «Հովհաննիսյան Արման Սերյոժայի» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Արման Սեյրանի» բառերով:

   1.2. «Հովհաննիսյան Հռիփսիմե Սերյանի» բառերը փոխարինել «Դեմիրճյան Հռիփսիմե Սեյրանի» բառերով:

   1.3. «Հովհաննիսյան Ադրինե Սերյանի» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Ադրինե Սեյրանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավարին փոխարինող՝**

23.01.2023

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

**Ա. Պապիկյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2023 **թվականի** № 61-Ա

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՈՒՍՅԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ Ք. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 48.18 ՔՄ, 89.68 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի №2072-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1) 48.18 քմ մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-1237-0018) և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 23/1:**

2) 89.68 քմ մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-1237-0018) և դրա առկա շինությունը հասցեավորել՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 23/2:**

3) Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2014 թվականի հոկտեմբերի 15–ի «Ա. Պետրոսյան փողոց N23 հասցեագրությամբ բնակելի տունը վերահասցեավորելու մասին» №2072-Ա որոշումը:

Недействительная подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<20>> հունվարի 2023 թվականի N 60-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆ ԷԼՅԱ ԱՐԹՈՒՐԻ ԺԱՄԱԿՈՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, ցանկի 19-րդ կետերով և հիմք ընդունելով Էլյա Արթուրի Ժամակոչյանի 2023 թվականի հունվարի 19-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի օգնական Էլյա Արթուրի Ժամակոչյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2023 թվականի հունվարի 24-ից:

**2.** Ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 4 աշխատանքային օր՝ 2023 թվականի հունվարի 24-ից մինչև 2023 թվականի հունվարի 27-ը ներառյալ:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էլյա Արթուրի Ժամակոչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

20.01.2023

X

**Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**
**փոխարինող**

**ք.Գյումրի**